ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No _____ « _____ » _____ 2019

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 593-L ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 593-L հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.08.2019

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարի 2019 թվականի _____ __-ի
N _____-Լ հրամանի

«Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2018 թվականի հունիսի 12-ի
N 593-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բարձրագույն որակավորման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) ենթակա մարմին է:
2. Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:
3. Կոմիտեն գործում է Սահմանադրության, օրենքների, միջազգային պայմանագրերի, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:
4. Նախարարությանը ենթակա մարմնի անվանումն է
1) հայերեն՝ Բարձրագույն որակավորման կոմիտե (ՀՀ ԲՈԿ),
2) ռուսերեն՝ Высший аттестационный комитет (ВАК РА),
3) անգլերեն՝ Supreme Certifying Committee (SCC RA):
5. Կոմիտեն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Կոմիտեն կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
6. Կոմիտեն կազմված է նախագահից, նախագահի տեղակալից, նախագահի օգնականից, կառուցվածքային ստորաբաժանումներից:
7. Կոմիտեին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:
8. Կոմիտեի գտնվելու վայրն է ք. Երևան, Կիևյան 16:

II. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Կոմիտեի նպատակներն են
1) գիտական աստիճանաշնորհման համակարգի աշխատանքի կազմակերպումը;
2) գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորումը:
10. Կոմիտեի խնդիրներն են
1) գիտական աստիճանաշնորհման համակարգի պետական չափանիշների մշակումը և պահպանումը;
2) գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական չափանիշների մշակումը և պահպանումը;
3) գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծումը, դրանց աշխատանքի կազմակերպումն ու վերահսկումը:

III. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Կոմիտեի գործառույթներն են.

1) մշակում է գիտական աստիճանաշնորհման և գիտական կոչումների շնորհման կանոնակարգերը և սահմանված կարգով ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը;

2) մշակում և հաստատում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգը;

3) ստեղծում, վերակազմավորում և լուծարում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհուրդները /այսուհետ՝ խորհուրդ/;

4) կազմում և հաստատում է այն գիտական մասնագիտությունների անվանացանկը, որոնցով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ;

5) հաստատում է ատենախոսությունների թեմաներ հաստատող գիտական կազմակերպությունների ցանկն ըստ սահմանված չափանիշների;

6) հաստատում է ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների ծրագրերը և այն հանձնաժողովները, որոնք ընդունելու են քննություններ;

7) հաստատում է այն գիտական պարբերականների ցուցակը, որտեղ կարող են հրապարակվել ատենախոսությունների արդյունքներն ու դրույթները՝ սահմանելով այդ ցուցակում ընդգրկվելու չափանիշներ;

8) ուսումնասիրում է որակավորման գործերը, ինչի արդյունքում

ա/ հաստատում Է խորհրդի որոշումը և հանձնում գիտական աստիճանի վկայագիր;

բ/ վերադարձնում է որակավորման գործը խորհուրդ՝ քննարկման;

գ/մերժում է խորհրդի որոշումը գիտական աստիճան շնորհելու մասին:

9) համապատասխանեցնում է օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագիրը Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրին;

10) հաստատում կամ մերժում է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական խորհուրդների որոշումները գիտական կոչումների շնորհման մասին՝ սահմանված չափանիշների համաձայն;

11) ԽՍՀՄ գիտական աստիճանի վկայագրի հիման վրա հանձնում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագիր;

12) համագործակցում է օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների հետ;

13) մասնակցում է բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի կազմակերպման գործընթացին;

14) կազմակերպում է խորհրդակցություններ, համաժողովներ;

15) սահմանված կարգով մասնակցում է գիտնականների որակավորման համակարգի գործունեության համար անհրաժեշտ բյուջետային հատկացումների բաշխմանը և իրականացնում պաշտպանությունների ֆինանսավորումը;

16) կազմակերպում է ատենախոսությունների և սեղմագրերի պահպանությունը, ատենախոսությունների թվայնացումը;

17) հրատարակում է տեղեկագրեր:

IV. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Կոմիտեն կառավարում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը (այսուհետ՝ Նախարար):

13. Նախարարը

1) հաստատում է Կոմիտեի կանոնադրությունը և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ;

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները;

3) հաստատում է Կոմիտեի կառուցվածքը և սահմանված կարգով կատարում կառուցվածքային փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ;

4) որոշում է հանձնվող գույքի կազմը և չափը;

5) Կոմիտեին վերապահված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները;

6) իրականացնում է Կոմիտեի գործունեության վերահսկողությունը;

7) լսում է Կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները;

8) վերահսկողություն է իրականացնում Կոմիտեին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ;

9) որոշում է ամրացված գույքի օգտագործման և տիրապետման կարգը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ;

10) հաստատում է տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ;

11) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

14. Կոմիտեն ղեկավարում է Կոմիտեի նախագահը (այսուհետ՝ Նախագահ):

15. Նախագահին անմիջական հաշվետու են Նախագահի տեղակալը, օգնականը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

16. Նախագահը հաշվետու է Կառավարությանը, վարչապետին և Նախարարին:

17. Նախագահը

1) պատասխանատու է Կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար;

2) առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր;

3) օրենքով կամ Կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում մարմնի համապատասխան աշխատողներին պաշտոնի նշանակելու և ազատելու, նրանց նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու և կարգապահական տույժեր նշանակելու առաջարկություն է ներկայացնում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին;

4) հաստատում է ներքին կարգապահական կանոնները;

5) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ;

6) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալի հանձնարարականները;

7) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ;

8) իր իրավասության սահմաններում տալիս է հրամաններ և ցուցումներ;

9) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

18. Նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Նախագահի տեղակալը:

19. Կոմիտեի հաստիքացուցակը Նախագահի առաջարկությամբ հաստատում է Նախարարը:

20. Նախագահի տեղակալը

1) գործում է Կոմիտեի ղեկավարից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված ոլորտում;

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին փոխանցում է Կոմիտեի նախագահի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն և արդյունքների մասին տեղեկացնում Նախագահին;

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ;

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Նախագահին ներկայացնում է առաջարկություններ;

5) իրականացնում է Նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

V. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

21. Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

1) Բնական և տեխնիկական գիտությունների բաժին

2) Հասարակական գիտությունների բաժին

3) Տեղեկատվության և արձանագրությունների բաժին

22. Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Նախագահը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

VI. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՅՔԸ

23. Կոմիտեն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

24. Կոմիտեի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով Կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

25. Կոմիտեն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Կոմիտեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

27. Կոմիտեի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: